# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 սեպտեմբերի 2022 թվականի N 378-Ա**

**ՏԱՐԵՑՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ 100 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, հիմք ընդունելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի գրությունը և Սյունիքի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժնի պետի զեկուցագիրը՝

**ո ր ո շ ու մ ե մ.**

1" «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N1 հավելվածի N1 աղյուսակի 01 բաժնի 01 խմբի 01 դասի 03՝ «Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում» ծախսային ծրագրով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համար նախատեսված ծախսերի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով սահմանված ֆոնդից 500000 (հինգ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով տարեցների միջազգային օրվա կապակցությամբ դրամական պարգևատրում հատկացնել Սյունիքի մարզի 100 և բարձր տարիքի հինգ քաղաքացու՝ համաձայն հավելվածի:

2" Հանձնարարել Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով ապահովել վերոնշյալ գումարի վճարումը Սյունիքի մարզպետի տեղակալի օգնական Սյուզաննա Գևորգյանի հաշվեհամարին՝ սույն որոշումից բխող գործառույթներն իրականացնելու նպատակով:

3" Սյունիքի մարզպետի տեղակալի օգնական Սյուզաննա Գևորգյանին՝ 5-օրյա ժամկետում ներկայացնել հաշվետվություն դրամական պարգևատրման հատկացման վերաբերյալ:

29.09.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. սեպտեմբերի 29
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022 թվականի սեպտեմբերի 29-ի N 378-Ա որոշման

**Ցանկ**
**Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ դրամական պարգևատրում ստացող Սյունիքի մարզի 100 և բարձր տարիքի քաղաքացիների**

| N | ԱԶԳԱՆՈՒՆ, ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ | Ծննդյան տարեթիվ | Համայնք, բնակավայր | ԳՈՒՄԱՐԻ ՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|
| 1. | Թանգյան Հայկուշ Ափոյի | 01.07.1920 թ. | Սիսիան, Բռնակոթ | 100000 (հարյուր հազար) |
| 2. | Թաղևոսյան Խանում Ասուլի | 01.07.1920 թ. | Գորիս | 100000 (հարյուր հազար) |
| 3. | Պողոսյան Ծովիկ Վաչեի | 01.07.1921 թ. | Մեղրի | 100000 (հարյուր հազար) |
| 4. | Ղազարյան Աղունիկ Ասատուրի | 26.09.1921 թ. | Տեղ, Խնածախ | 100000 (հարյուր հազար) |
| 5. | Սամվելյան Ծաղիկ Գրիգորի | 01.07.1922 թ. | Մեղրի, Լեհվազ | 100000 (հարյուր հազար) |

9/29/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

**Գլխավոր քարտուղար** **Է. Մարտիրոսյան**